

Լիանա Վ. Ազիզյան

**ԳՐԱԲԱՐՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ *յ* (*y*), *ւ* (*w*) ԵՎ  
ԼԱՏԻՆԵՐԵՆԻ *i* (*j*), *u* (*w/v*) ՁԱՅՆՈՐԴՆԵՐԸ  
(գուգադրական քննություն)\***

**Բանալի բառեր** – Է. Աղայան, Հ. Հյուբման, Ա. Քսեր, հնչույթային համակարգ, հնչույթային և հնչյունական արժեքներ, ձայնորդ, գրաբարյան հայերեն, լատիներեն, դիրքային տարբերակ, իմաստատարբերակիչ հակադրություն:

Գրաբարյան հայերենում տարբերակվող ձայնորդներից՝ **լ** (*l*), **ղ** (*l̥*), **մ** (*m*), **ն** (*n*), **ր** (*r*), **ռ** (*r̥*), **յ** (*y*), **ւ** (*w*), վերջին երկուսը՝ **յ** (*y*)-ն և **ւ** (*w*)-ը, մասնակցում են երկբարբառների և եռաբարբառների կազմավորմանը՝ ի տարբերություն մյուսների, որոնք այդպիսի գործառույթ չունեն: Այդ հանգամանքը մեզ հիմք է տալիս նշված երկու ձայնորդները քննելու միասնաբար:

Պրոֆեսորներ Է. Աղայանը և Հ. Մուրադյանը վերոհիշյալ հանգամանքը բացատրում են նրանով, որ գրաբարում, իրենց դիրքով պայմանավորված, վանկարար կամ ոչ վանկարար գործառույթ ունենալու հատկանիշը պահպանել էին միայն **յ** (*y*)-ն և **ւ** (*w*)-ը: Մինչդեռ **լ** [*l*], **ղ** [*l̥*], **մ** [*m*], **ն** [*n*], **ր** [*r*] և **ռ** [*r̥*] հնչյուններն անցել էին բաղաձայնների դաս<sup>1</sup>: **Յ** (*y*)-ն և **ւ** (*w*)-ը Մ. Աբեղյանը համարել է անվանկային կամ բաղաձայնական հնչյուններ, որոնցով հնարավոր է կազմել երկբարբառներ<sup>2</sup>: Մինչդեռ Վ. Առաքելյանն այս հնչույթները ներկայացրել է ձայնավորների շարքում<sup>3</sup>:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.04.2023:

1 Տե՛ս **Աղայան Է.**, Գրաբարի քերականություն, հատ. I, Եր., 1964, էջ 172, **Մուրադյան Հ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հատ. I. Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 206-217:

2 Տե՛ս **Աբեղյան Մ.**, Գրաբարի քերականություն, Եր., 1936, էջ 9-10:

3 Տե՛ս **Առաքելյան Վ.**, Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 10:

ՎԷ՛մ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 2 (82), ապրիլ-հունիս, 2023

Հ. Հյուբշմանը որպես գրաբարյան ձայնորդներ նշում է **ու** (u), **ւ** (w), **վ** (v) և **յ** (y) հնչույթները: **ու**, **ւ** և **վ** հնչույթների հնչյունական արժեքը ներկայացնում է միևնույն՝ [v] տառադարձությամբ<sup>4</sup>:

Գրաբարյան ձայնորդներն առաջացել են հնդեվրոպական ձայնորդներից: Միակ տարբերությունն այն է, որ **լ** (l), **ղ** (ʎ), **մ** (m), **ն** (n), **ր** (r) և **ռ** (ʀ) հնչյունները հնդեվրոպական նախալեզվում ունեցել են և՛ բաղաձայնական, և՛ ձայնավորական (= վանկարար) հատկանիշներ, մինչդեռ գրաբարում, ինչպես նշեցինք, դրանցից բուն ձայնորդական հատկանիշները պահպանել էին միայն երկուսը՝ **յ** (y)-ն և **ւ** (w)-ը:

Ի տարբերություն գրաբարյան հայերենի՝ լատիներենում հստակ առանձնացվել է երկու ձայնորդ՝ [j]-ն և [w]-ն, որոնք, ի դեպ, գրավոր խոսքում արտահայտվել են այլ հնչյունների համար նախատեսված գրային նշաններով. [j]-ն՝ i-ի, [w]-ն՝ u-ի միջոցով (հմմտ. cuius [kujjus] «որը», iuventus [juventus] «երիտասարդություն», pluit [pluivit] «անձրևում է», duo [duvo] «երկու»):

Միսլ է այս շարքում նշել y-ն, քանի որ այն հանդիպում է միայն հունարենից կատարված փոխառություններում, հետևաբար հիմքեր կան ասելու, որ այդ հնչույթը լատիներենին անցել է հունական փոխառությունների միջոցով<sup>5</sup>:

Փաստորեն, **i** և **u** հնչույթները հանդես են գալիս ոչ միայն որպես ձայնավորներ՝ իրենց երկար և կարճ տարբերակներով, այլև որպես ձայնորդներ՝ իրենց արտասանական հատկանիշներով մոտենալով բաղաձայններին:

Արդի հայ լեզվաբաններից Վ. Համբարձումյանը **j** և **v** հնչյունները համարում է ձայնավորների տարբերակներ՝ ձայնորդային արժեքով<sup>6</sup>:

**I [j]** և **u [w]** ձայնորդները հանդիպում են վանկի սկզբում, բաղաձայնից հետո կամ բառասկզբում, իսկ **i** և **u** ձայնավորները՝ բաղաձայնից առաջ կամ բառավերջում:

Որպես «բաղաձայն»՝ **i**-ն հնչում է [j], ինչպես հայերենի **յ**-ն «յոթ» բառում: Որոշ գրավոր սկզբնաղբյուրներում այն երբեմն արտահայտված է հենց **j** տառով, ինչպես **u** ձայնորդն է շատ հաճախ հանդիպում որպես **v**՝ դարձյալ պայմանավորված արտասանությամբ:

4 Տե՛ս Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 166:

5 Լատիներենում այն արտասանվել է [y], ինչպես ֆրանսերենի **u** հնչյունը:

6 Տե՛ս Համբարձումյան Վ., Լատիներենի դասագիրք, Եր., 2007, էջ 10:

Որոշ դիրքերում **v** (< **u**) կիսաձայնը ենթարկվել է փոփոխությունների.

1) **Ö**-ից առաջ անհետացել է՝ բացառությամբ բառասկզբի դիրքի (հմմտ. *deivös* > լատ. *deus* «աստված». այս անցման համար Մ. Նիդերմանը ենթադրել է \**dēvös* > \**dēōs* > *dēūs* միջանկյալ օղակները):

2) Երկու ձայնավորների միջև **v**-ն ընկել է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձայնավորներից մեկը եղել է շեշտակիր (հմմտ. *lavātrīna* > *lātrīna* «սանհանգույց»)<sup>7</sup>:

Մի քանի բառում **v**-ն, այնուամենայնիվ, պահպանվել է (հմմտ. *dīvīnus* «աստվածային», *sevērus* «խիստ», *avārus* «ժլատ», *lavātiō* «լվացք», *oblīvīscor* «մոռացում»):

**J** և **i**, **u** և **v** հնչույթները տարբերակվել են տպագրության ի հայտ գալուց հետո: Քանի որ [j] կիսաձայնով արտահայտվում էր երկու հնչույթ, ոմանք նախընտրում էին այն գրել երկու *i*-երով՝ *ii*: Օրինակ՝ [j] կիսաձայնը կրկնակ *i*-ով են արտահայտել Ցիցերոնը և Վեսարը (հմմտ. *Maiia*, *Pompeius*):

Արտասանությունը	Գրությունը	Օրինակներ
[j]	i, j, e	<i>juctim</i> «համատեղ», <i>iusiurandum</i> «երդում», <i>stellae</i> «աստղեր»
[w]	u, v	<i>haud</i> «ոչ», <i>pavidus</i> «վախեցած»

Ի տարբերություն որոշ լեզվաբանների, որոնք պնդում են, թե **j** և **w** ձայնորդները **i** և **u** ձայնավորների դիրքային տարբերակներն են, Ա. Քսերը, անդրադարձ կատարելով որոշ բառերի ձևաբանական կառուցվածքին, ցույց է տալիս, որ դրանք գործառել են որպես առանձին ձայնորդներ<sup>8</sup> (հմմտ. *vol(w)it* «նա պտտում է» – *vol(u)it* «նա ուզում էր» (այստեղ **u**-ն անցյալ կատարյալի ցուցիչ է)):

Բառավերջում **j**-ն շատ հազվադեպ է հանդիպում: Բացի **prae** նախդրից և մի քանի բացականչություններից՝ այն հանդիպում է նաև **a** հոլովման գոյականների և ածականների կազմում:

7 Տե՛ս **Нидерман М.**, Историческая фонетика латинского языка, М., 1949, էջ 108-110:  
 8 Տե՛ս **Cser A.**, The Phonology of Classical Latin, Willey Blackwell, 2020, էջ 14:

Բառավերջում **w**-ն հանդիպում է հինգ բառի կազմում՝ *seu* «կամ», *neu* «ո՛չ ... ո՛չ», *ceu* «ինչպես, նման», *(e)heu* (բացականշություն), *hau* «ոչ»:

Եթե դիտարկենք լատիներենում բաղաձայնական կապակցությունների օրինակները, կնկատենք, որ ձայնորդները հանդիպում են հիմնականում **qu** և **gu** կապակցություններում, մինչդեռ **w** ձայնորդը՝ **l**, **r**, **j** հնչույթներից հետո՝ *lw*, *rw*, *jw* կապակցություններում: **Qu** և **gu** կապակցությունները հանդիպում են բառամիջում, իսկ բառավերջում՝ ոչ, քանի որ լատիներենում բարձրացող հնչեղությամբ կապակցություններ բառավերջում չեն հանդիպում:

**Kw** և **sw** բաղաձայնական կապակցությունները հանդիպում են բառասկզբում: Երբեմն **sw**-ն դիտարկվում է որպես առանձին հնչույթ: Հիմք է ընդունվում այն փաստը, որ բաղաձայնական կապակցություններում **w**-ն առանձին բառասկզբում հանդես չի գալիս՝ բացառությամբ **sw**-ի, իսկ **s**-ն երբեք չի հանդիպում պարզ ձևերում՝ ձայնեղ բաղաձայնից առաջ (դարձյալ բացառությամբ **sw**-ի): Այնուամենայնիվ, ըստ Քսերի, ձիշտ չէ հիմնվել միայն այս հնչյունների դիրքային սահմանափակումների վրա և պնդել, որ **sw** կապակցությունը մեկ հնչույթ է<sup>9</sup>:

Արտասանությունը	Գրությունը	Օրինակներ
(j)	յ	յաղթանակ, մայր
(w)	վ, լ	վախկոտ, սակաւ

Գրաբարյան **j** (*y*)-ի ծագման հարցը փոքր-ինչ խնդրահարույց է, քանի որ մի կողմից՝ այն ծագել է հնդեվրոպական տարբեր հնչույթներից, իսկ մյուս կողմից՝ *h*-*ե*. \**y*-ն հայերենում ունեցել է տարբեր զարգացումներ: Այս խնդրին հանգամանորեն անդրադարձել է լեզվաբան Վ. Պետրոսյանը: Վերջինիս կարծիքով՝ **j** (*y*)-ն միանշանակ ունի հնդեվրոպական ծագում<sup>10</sup>: Ըստ այդմ.

1) Բնիկ հայերեն բառերում բառասկզբում **j** (*y*)-ն նախդիր է՝ բացառությամբ մի քանի բառերի, որոնցում այն արմատի մաս է կազ-

9 Տե՛ս նույն տեղում, էջ 25-26:

10 Տե՛ս Պետրոսյան Վ., Հին հայերենի Յ (Y/I) ձայնորդը տարածամանակյա և համաժամանակյա հայեցակերպերում, «Հայագիտության հարցեր», Եր., 2018, N 3, էջ 158-164:

մուն (հմմտ. **յարայ** «խորթ հայր», **յետ, յիսուն, յոլով** «շատ, բազմաթիվ»): Վերջինները ծագում են հ.-ե. \*p-ից:

2) Բառամիջի և բառավերջի **յ** (y)-ն ծագում է հ.-ե. \*y-ից:

Գրաբարում բառասկզբում **յ** (y) ձայնորդը ձայնավորից առաջ միշտ բաղաձայն էր (նույն դիրքում բաղաձայնից առաջ ևս բաղաձայն էր): Հմմտ. **յաճախ, յանառ, յղել** «ուղարկել», **յստակ** և այլն:

Բաղաձայնական **յ** (y) ձայնորդը հանդիպում է բառամիջում՝ երկու ձայնավորների միջև, և բառավերջում՝ **ա** (a) և **ո** (o) ձայնավորներից հետո: Ըստ Է. Աղայանի՝ **յ** (y)-ն **ի** [i] ձայնորդի ենթահնչույթն է (հմմտ. **կայան, վայել, ծառայ, հաճոյ**)<sup>11</sup>:

Է. Թումանյանը նույնպես միջնալեզվային **յ** (y) ձայնորդը համարում է **ի** (i) ձայնավորի բաղաձայնական տարբերակը: Երկու հնչյունների արտասանության ժամանակ լեզվի միջին հատվածը վեր է բարձրանում: Չնայած **ի** (i) ձայնավորը և **յ** (y) ձայնորդը արտասանական և ձայնային զգալի նմանություններ ունեն, այնուամենայնիվ, տարբերվում են ըստ արտաբերության տեղի. **ի** (i)-ն առաջին շարքի է, իսկ **յ** (y)-ն՝ միջին<sup>12</sup>:

**Յ** (y)-ն այն ձայնորդներից է, որոնք պահպանել են կիսաձայնային հատկանիշը: Այն հանդիպում է բոլոր դիրքերում և ունեցել է միևնույն արտասանությունը: Բառավերջում հանդես է գալիս **ա** (a) և **ո** (o) ձայնավորներից հետո (հմմտ. **յաղթական, յաճախ, կայան, խոյակ, լուսնակայ** «լուսնի լույս», **հալածոյ** «ձուլածոյ»):

Այսպիսով՝ գրաբարյան **յ** (y)-ին վերագրվել է երկակի արժեք. ա) համարվել է **ի** [i] ձայնավորի ենթահնչույթը, բ) հանդես է եկել որպես առանձին հնչույթ՝ հակադրություն կազմելով բառասկզբի և բառավերջի դիրքերում այլ հնչույթների հետ:

Գրաբարյան **ւ** [w]-ը եղել է երկշրթնային ձայնորդ, ունեցել անզլերենի [w]-ին մոտ հնչյունական արժեք, գրաբարի հնչույթային համակարգում զբաղեցրել է նույն տեղը, ինչ \*w-ն՝ հնդեվրոպական նախալեզվի հնչույթային համակարգում<sup>13</sup>:

Հ. Հյուբշմանը, պնդելով, որ հայերենի այբուբենը ստեղծվել է հունարենի այբուբենի օրինակով, **ւ**-ի համարժեքը հունարենի այբու-

11 Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 191:

12 Տե՛ս Туманян Э., Древнеармянский язык, М., 1971, էջ 43:

13 Տե՛ս Պետրոսյան Վ., Հին հայերենի / (Y) ձայնորդի տարածամասակա և համաժամանակյա բնութագրերը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Եր., 2017, N 3, էջ 18:

բենում համարում է **օ** [u]-ն և **ւ**-ը ներկայացնում ձայնավորների շարքում<sup>14</sup>:

Ըստ Ա. Մեյերի՝ հայերենի **վ** (v)-ն և **ւ** (w)-ը «գոնե մասնակիորեն» ծագել են հնդեվրոպական \*w-ից<sup>15</sup>: Նրա պնդմամբ՝ գրաբարում դրանք եղել են առանձին հնչույթներ. **ւ** [w]-ն ունեցել է բաղաձայն **ու** (u)-ի արժեք: Դա կարելի է տեսնել այն դեպքերում, երբ **աւ**-ից վերածվել է **օ** (o)-ի, իսկ **եւ**-ում արտասանվել է [io]:

Գ. Զահուկյանը ևս կարծում է, որ հայերենի **ւ** [w] և **վ** [v] հնչյունները ծագել են հնդեվրոպական \*u (/w)-ից<sup>16</sup>:

Ըստ Հ. Աճառյանի՝ **վ** (v)-ն և **ւ** (w)-ը արտասանական տարբերություններ չեն ունեցել: Նա նշում է, որ «Մեսրոպի ժամանակ մեր այսօրվա *ով* գրության տեղ գործածվում էր *աւ*. ինչպես՝ *բաւանդակ*, *եքաւաւին* ևն. *ով* չկար»<sup>17</sup>:

**ւ** (w)-ը հանդես է գալիս ձայնավորներից միայն **ա** [a]-ից, **ե** [e]-ից և **ի** [i]-ից հետո, իսկ եթե հաջորդում է բաղաձայնին, հանդես է գալիս **ու** [u]-ի տեսքով<sup>18</sup>: **վ** (v)-ն եղել է բառասկզբում գործառող միակ ձևը: Այնուամենայնիվ, **ւ** [w]-ը և **վ** [v]-ն իրար մոտ հնչույթներ են եղել: Գրաբարում կիրառվող այս երկու հնչույթները ժամանակակից հայերենում հանդես են գալիս որպես մեկ շրթնատամնային **վ** (v): **վ** (v)-ն ակնհայտորեն ունեցել է բաղաձայնական հատկանիշներ, մինչդեռ **ւ** (w)-ը եղել է կիսաձայն երկշրթնային հնչյուն, որը հանդես է եկել որպես երկբարբառի բաղադրիչ, ինչպես նաև որպես բաղաձայն<sup>19</sup>:

**վ** (v) բաղաձայնը հայերենում ունեցել է արտահայտության երեք ձև՝

- 1) **վ**՝ բառասկզբում և **ո**-ից հետո (հմմտ. *վախկոտ*, *հովանալ*),
- 2) **ւ**՝ բառամիջում և բառավերջում՝ **ա**, **ե**, **ի** ձայնավորներից հետո (հմմտ. *լաւագոյն*, *սակաւ*, *արեւ*, *հագիւ*)<sup>20</sup>,
- 3) **ու**՝ **ա** բառասկզբում՝ բաղաձայնին նախորդող դիրքում (հմմտ. *ուղի* «ձանապարհ», *ունկն* «ականջ», *ուրախ*, *ուրու* և այլն), **ը** երկու բաղաձայնների, այդ թվում՝ ձայնորդների միջև (հմմտ. *հա*-

14 Տե՛ս Հրութնան Հ., նշվ. աշխ., էջ 67:

15 Տե՛ս Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 48-49:

16 Տե՛ս Джаукян Г., Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 41:

17 Աճառյան Հ., Հայոց գրերը, Եր., 1984, էջ 478:

18 Տե՛ս Հրութնան Հ., նշվ. աշխ., էջ 71:

19 Տե՛ս Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 5:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 9:

**ումն** «սկսվելը, սկզբնավորություն», **քառութին, լառութին**), գ) բառավերջում (հմմտ. **լեզու, երկու, ծովու** («ծով» բառի եզ. թ. սեռ. և գրծ. հլ. ձևերը) և այլն):

Այսպիսով՝ **վ**-ն, **ւ**-ը և **ու**-ն համարվել են միևնույն հնչույթի դիրքային տարբերակները<sup>21</sup>: Հ. Հյուբշմանի կարծիքով՝ քանի որ **վ, ւ** և **ու** հնչույթների միջև արտասանական տարբերություններ չեն նկատվել, դրանց տառադարձման համար ձիշտ կլինի գործածել **v**-ն<sup>22</sup>: Հ. Մուրադյանը կարծում է, որ [v]-ի՝ մի քանի ձևով արտահայտվելը հունարենի ուղղագրական կանոնների ազդեցության հետևանք է<sup>23</sup>: Մեր կարծիքով, սակայն, գրաբարյան հայերենում **վ, ւ** և **ու** գրերով նշանակվել են առանձին հնչույթներ, քանի որ Մաշտոցը յուրաքանչյուր հնչույթի համար ստեղծել է առանձին տառ:

Վ. Համբարձումյանը բաղաձայնների դասակարգման մեջ մոտավոր տեղ է հատկացրել **ւ** [w]-ին: Ըստ նրա՝ **ւ** [w]-ը աստիճանաբար վերածվել է շփական **վ** [v] բաղաձայնի և դուրս մնացել գրաբարի բաղաձայնական համակարգից՝ հանդես գալով միայն **ու** ձայնավորի կազմում<sup>24</sup>:

**Խ** [w]-ն իմաստատարբերակիչ հակադրություններ է ձևավորել այլ հնչյունների հետ բառամիջում և բառավերջում (հմմտ. **առան – առան, գառակ** «ձիու հետևի կողմը՝ պոչից մինչև մեջք» – **գառակ** «օղակ», **հառակ** «1. սկիզբ, 2. առաջնորդ» – **հառակ** «ամբողջովին», **հարաւ – հարած** «վերք», **լաւ – լաց, թաւ – թափ** «հատակ, խորք»):

Երկու դեպքում էլ՝ թե՛ գրաբարում, թե՛ լատիներենում, **յ/յ** և **ւ/w** հնչույթները պահպանել են իրենց ձայնորդական հատկանիշները:

Գրաբարյան ձայնորդներ	Լատիներեն ձայնորդներ
յ [y]	j [j]
ւ [w]	w [w]

Այսպիսով՝ վերոշարադրյալից բխում են հետևյալ եզրահանգումները.

21 Տե՛ս Սղայան Է., նշվ. աշխ., էջ 94:  
 22 Տե՛ս Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 71:  
 23 Տե՛ս Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 234:  
 24 Տե՛ս Համբարձումյան Վ., Գրաբարի ծեռնարկ, Եր., 2018, էջ 20:

1) Գրաբարյան յ [y] և լ [w] ձայնորդներն ունեն հնդեվրոպական ծագում:

2) Գրաբարի ձայնորդներից միայն յ [y] և լ [w] կհսաձայններն են հանդես եկել երկբարբառների և եռաբարբառների կազմում:

3) Լատիներենի հետ համեմատելիս տեսնում ենք, որ լատիներենում նույնպես առանձնացվել են համապատասխան յ և w ձայնորդները, որոնք արտահայտվել են i և u ձայնավորանիշ տառերով:

4) Թե՛ գրաբարի և թե՛ լատիներենի վերոհիշյալ ձայնորդները որոշակի դիրքերում ձևավորել են իմաստատարբերակիչ հակադրություններ, հետևաբար դրանք ինքնուրույն հնչույթներ էին և ոչ թե մեկ այլ հնչույթի դիրքային տարբերակներ:

**Լիանա Վ. Ազիզյան** – հեղինակ է 2 գիտական հոդվածի: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են ընդհանուր լեզվաբանությունը, հնչույթաբանական ուսմունքները, գրաբարի և լատիներենի հնչույթաբանական համակարգերը:

Էլ. հասցե՝ [aliana.96@mail.ru](mailto:aliana.96@mail.ru)

Summary

## THE SONORANTS Յ (Y) AND Լ (W) OF THE ANCIENT ARMENIAN AND LATIN (COMPARATIVE ANALYSIS)

Liana V. Azizyan

**Key words** – E. Aghayan, H. Hübschmann, A. Cser, phonological system, phonemic and phonetic values, sonorant, Ancient Armenian, Latin, positional variant, distinctive opposition.

From the Ancient Armenian sonorants լ (l), դ (d), մ (m), ն (n), ր (r), ռ (r̄), լ (w), յ (j) only the last two լ (w) and յ (j), participated in the formation of diphthongs and triphthongs, because only these two phonemes acted as sonorants. And therefore we shall study these two sonorants together.

The Ancient Armenian յ (y) was of a dual nature; a) it was considered an allophone of the vowel ի (i), b) it performed an independent phonological



function, contrasting with other phonemes at the beginning and the end of a word.

Վ, ւ and ու were considered positional variants of the same phoneme. Բ appeared in the middle and at the end of a word, after the vowels u, ւ, ի, forming differential contrasts with other phonemes.

In Latin, two sonorants -(j) and (w)- were distinguished, which were expressed in the written form with letters which were also used for other sounds; (j) was expressed with i, (w) was expressed with u. I (j) and u (w) acted not only as vowels with their long and short variants, but also as sonorants, having phonological features characteristic for consonants. Sonorants i (j) and u (w) appear at the beginning of a syllable, after a consonant or at the beginning of a word. I and u vowels appear before a consonant or in final positions. The difference between the phonemes j and i, u and w in written language was already expressed after the advent of printing.

The sonorants ւ (w), յ (j) of the Ancient Armenian and the sonorants u (w), i (j) of Latin have some common features: 1) the sonorants of the two languages come from the corresponding \*w and \*y sonorants (the latter is a positional variant of the vowel \*i) of the common Indo-European language; 2) both sonorants in the respective languages performed independent phonological function; 3) they participated in the formation of the diphthongs (in Armenian also of the triphthongs). The sonorants i (j) and u (w) in Latin are bivalent, because, in addition to functioning as sonorants, they also function as vowels with their short and long variants.

## СОНАНТЫ Յ (Y) И Դ (W) ДРЕВНЕАРМЯНСКОГО И ЛАТИНСКОГО ЯЗЫКОВ (сопоставительный анализ)

Лиана В. Азизян

**Ключевые слова** – Э. Агаян, Г. Гюбшман, А. Ксер, фонологическая система, фонематическая и фонетическая значимость, сонанты, древнеармянский язык, латинский язык, позиционный вариант, смысловозначительная оппозиция.

Из древнеармянских сонантов լ (l), ղ (ʃ), մ (m), ն (n), ր (r), ռ (r'), ւ (w), յ (j) в образовании дифтонгов и трифтонгов участвовали только ւ (w) и յ (j), т.к. только они выступали в качестве сонантов. И поэтому мы будем изучать эти два сонанта параллельно.

Древнеармянский յ (y) имел двойственный характер: а) он считался аллофоном гласного ի (i); б) выполнял самостоятельную фонологическую функцию, контрастирующую с другими фонемами в начале и конце слова.

Չ, լ и ռ считались позиционными вариантами одной и той же фонемы. Դ появился в середине и в конце слова после гласных ա, ե, ի, образуя дифференциальные контрасты с другими фонемами.

В латинском языке выделены два сонанта – (j) и (w), выражаемые на письме буквами, которые также использовались для обозначения других звуков; (j) выражался через i, (w) – через u. I (j) и u (w) выступают не только как гласные с их долгими и краткими вариантами, но и как сонанты, по своим произносительным особенностям приближаясь к согласным. Сонанты i (j) и u (w) стоят в начале слога после согласного или в начале слова, а гласные i и u находятся перед согласной или в конечной позиции. Различие между фонемами j и i, u и v на письме отразилось уже после появления книгопечатания.

Сонанты ւ (w), յ (j) в древнеармянском языке и сонанты u (w), i (j) в латинском имеют некоторые общие черты: 1) происходили из соответствующих сонантов общеиндоевропейского языка \*w и \*y (последний является позиционным вариантом гласного \*i); 2) в соответствующих языках

выполняли самостоятельную фонологическую функцию; 3) участвовали в формировании дифтонгов (в армянском языке также трифтонгов). Сонанты *i* (*j*) и *u* (*w*) в латинском языке были двувалентны, потому что помимо сонантных функций, они также выполняли функции гласных с их коротким и длинным вариантами.

## REFERENCES

1. **Abeghyan M.**, Grabari k'erakanut'yun, Yer., 1936 (**In Armenian**).
2. **Abrahamyan A.**, Grabari dzeṙnark, Yer., 1976 (**In Armenian**).
3. **Acharyan H.**, Hayots' grerë, Yer., 1976 (**In Armenian**).
4. **Aghayan Ē.**, Grabari k'erakanut'yun, hat. 1, Yer., 1964 (**In Armenian**).
5. **Aṙak'elian V.**, Grabari k'erakanut'iwn, Yer., 2010 (**In Armenian**).
6. **Dzhaukjan G.**, Sravnitel'naja grammatika armjanskogo jazyka, Jer., 1982 (**In Russian**).
7. **Hambardzumyan V.**, Latinereni dasagirk', Yer., 2007 (**In Armenian**).
8. **Hyubshman H.**, Hayagitakan usumnasirut'yunner, Yer., 2004 (**In Armenian**).
9. **Muradyan H.**, Hayots' lezvi patmakan k'erakanut'yun, hat. 1. Hnch'yunabanut'yun, Yer., 1982 (**In Armenian**).
10. **Niderman M.**, Istoricheskaja fonetika latinskogo jazyka, M., 1949 (**In Russian**).
11. **Petrosyan V.**, Hin hayereni *t* (*ŭ*) dzaynordi tarazhamanakya yev hamazhamanakya bnut'agrerë, "Banber Yerevani hamalsarani. Banasirut'yun", Yer., 2017, N 3, ëj 11-22 (**In Armenian**).
12. **Petrosyan V.**, Hin hayereni *š* (*Y/I*) dzaynordë tarazhamanakya yev hamazhamanakya hayets'akerperum, "Hayagitut'yan harts'er", Yer., 2018, N 3, ëj 158-164 (**In Armenian**).
13. **Tumanjan E.**, Drevnearmjanskij jazyk, M., 1971 (**In Russian**).